ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 20.02. 2017 թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս ընկերության գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման, (ասյուհետ՝ Կողմեր) 2014թ. մայիսի 26-ին կնքված՝ «Պետաման նպաստների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սոցիալական ապահովության համապատասխան ծրագրերով ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը, ըստ ծրագրերի, սահմանել 491 801 942 (չորս հարյուր իննսունմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար իննը հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ՝

1) N 1 հավելվածի՝ 10 բաժին, 09 խմբի, 02 դասի N 17 «"ՎՏԲ- Հայաստան" ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայություններ » ծրագրով ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը սահմանել «17 821 783 (տասնյոթ միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր ութսուն երեք)» ՀՀ դրամ:

2) N 1 հավելվածի՝ 10 բաժին, 09 խմբի, 02 դասի N 19 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրով ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը սահմանել «473 980 159 (չորս հարյուր յոթանասուներեք միլիոն իննը հարյուր ութսուն հազար հարյուր հիսունիննը)» ՀՀ դրամ:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

2.3. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011010890 Հ/Հ 900011011161 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Ծառայության աշխատակազմի ղեկավար	«Հայփոստ» ՓԲ ընկերություն ք.Երևան Սարյան 22 Հ/Հ 1930003703150100 ՀՎՀՀ 02507464 ՝Կոնվերսբանկ՝ ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Մ.Մինասյան	Հ.Ավագյան
Կ.Տ	Կ.Տ